01/10.4/9902-09
2009-12-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի, Ռուբեն Գևորգյանի և Հովհաննես Սահակյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունն սկզբունքորեն դեմ չէ վիրավորանքի և զրպարտության ապաքրեականացմանը, սակայն, ստորև ներկայացված փաստարկների հաշվառմամբ, կարծում ենք, որ այդ մոտեցումը կարող է վերանայվել։ Ընդ որում, այդ փաստարկներից մեկը՝ մասնավոր մեղադրանքի ինստիտուտի արմատական բարեփոխումը, նոր է և իր արտացոլումն է ստացել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, որը ևս դրված է շրջանառության մեջ։

Ընդհանրապես, ցանկացած՝ հանրորեն վտանգավոր արարքի համար պատասխանատվության ինստիտուտի միասնականությունը երաշխիք է, որպեսզի ապահովվի

մարդկանց իրավահավասարության սահմանադրական սկզբունքը։ Այսպես, եթե ընտրության անցկացման ընթացքում կուսակցության կամ թեկնածուի վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը դեռևս պետք է համարվի քրեական հանցանք, ապա հիմնավորված չէ ցանկացած այլ անձի զրպարտելու ապաքրեականացումը։

Առայժմ ապաքրեականացված է միայն պաշտոնատար անձանց վիրավորելու կամ զրպարտելու համար արարքը՝ հաշվի առնելով վերջիններիս հրապարակայնորեն գործելու և դրանից բխող այլ փաստարկները։ Նշված մոտեցումն արդեն հիշյալ ընդհանուր քաղաքականության ենթատեքստում խոցելի է։

Քրեական պատասխանատվության ինստիտուտի առկայությունը վիճարկելի չէ, եթե այն գործնականում չի դառնում իշխանությունների կողմից չարաշահման առարկա և մի լրացուցիչ անգամ վկայում է պետության ընդհանուր քաղաքականության մասին, իսկ այն, որ չարաշահումները ոչ միայն բացառվում են, այլև քայլեր են ձեռնարկվում այն բացառապես մասնավոր մեղադրանքի շրջանակներում կիրառելու համար, վկայում են և օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությունը և վիճակագրությունը։

Հարկ է հաշվի առնել նաև այն, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նոր նախագծով ընդհանրապես բացառվում է քրեական հետապնդում իրականացնող մարմինների միջամտությունը, քանզի տուժողը մասնավոր մեղադրանքի գործերով իրավասու է անմիջապես դիմելու դատարան։ Այսինքն, առաջարկվում է մի այնպիսի ընթացակարգ, երբ անձն ինքն է որոշում իր իրավունքների պաշտպանության եղանակը՝ առանց որևէ իշխանության մարմնի միջամտության։ Այս առումով է, որ ստեղծված իրավիճակում նպատակահարմար է միաժամանակ նախատեսել և՛ քրեական, և՛ քաղաքացիական պատասխանատվության ինստիտուտները։

Բացի դրանից, տվյալ դեպքում չի կարելի ամբողջովին խոսել արարքների ապաքրեականացման և դրանց համար քաղաքացիական պատասխանատվություն սահմանելու մասին, քանի որ նախագծով, օրինակ, այլ բնորոշում է տրվում վիրավորանքին։

Մասնավորապես, քաղաքացիաիրավական եղանակով անձն այլևս զրկվում է ոչ հրապարակային եղանակով իր պատիվն ու արժանապատվությունն ստորացնելու համար մասնավոր մեղադրանքից։ Ընդ որում, հարկ է նկատել, որ հրապարակայնորեն վիրավորանք հասցնելը միշտ չէ, որ նույնացվում է խուլիգանության հետ։ Դա հաճախ պայմանավորված է տուժողի և կասկածյալի միջև փոխհարաբերության բնույթով ու հանցակազմի սուբյեկտիվ կողմի տարրերով։

Իրավաչափ չէ նաև ծեծի համար քրեական պատասխանատվություն սահմանելը՝ վիրավորանքի և զրպարտության հանցանքներն ապաքրեականացնելու պարագայում, քանզի միջազգային իրավական փաստաթղթերում ֆիզիկական բռնությունը չի գերակայում հոգեկան տառապանք պատճառող վիրավորանքին կամ զրպարտությանը։

Քրեական պատասխանատվությունը պահպանելը հիմնավորվում է նաև ոչ հրապարակային եղանակով վիրավորանք հասցնելու համար քաղաքացիական պատասխանատվությունը բացառելու հիմքով։

Այն բոլոր երկրներում (Սերբիա, Սլովենիա, Ռումինիա, Դանիա, Չեխիա, Գերմանիա, Կիպրոս, Մոլդովա, Ուկրաինա, Լիտվա, Լատվիա, Ռուսաստան և այլն), որտեղ պահպանվել է նշված արարքների համար քրեական պատասխանատվությունը, հիմնականում նաև հիմք է ընդունվել այն, որ մասնավոր մեղադրանքի ինստիտուտն ամբողջովին բացառում է հնարավոր մտահոգությունները՝ կապված այդ ինստիտուտի անհրաժեշտության հետ։

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող նոր՝ 1087.1-ին հոդվածի՝

1. 1-ին մասի առնչությամբ հարկ է նկատել, որ «դիմել դատարան անձի դեմ» արտահայտությունը չի ապահովում նույնասեռ քաղաքացիաիրավական դրույթների

խմբագրման միասնականությունը։ Առաջարկում ենք հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քաղաքացու պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն գլխով նախատեսված կանոններով՝ սույն պարագրաֆով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ»։

2. 2-րդ մասում առաջարկում ենք «կատարված» բառը փոխարինել «արված» բառով։

3. 5-րդ մասի առնչությամբ հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պատգամավորները կարող են ազատվել պատասխանատվությունից՝ «Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում»։ Մինչդեռ, առաջարկվող տարբերակով ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական պատասխանատվությունից ազատվում են ինչպես պատգամավորները, այնպես էլ՝ ցանկացած այլ ոք, ով մասնակցում է, օրինակ, խորհրդարանական լսումներին։ Տվյալ դեպքում առկա է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հետ հակասության խնդիր։ Լավագույն դեպքում՝ նախագծով այդ պատասխանատվությունից կարող էին ազատվել պատգամավորները։ Հակառակ դեպքում ստացվում է, որ խորհրդարանական լսումներին մասնակից յուրաքանչյուր ոք արհեստականորեն ձեռք է բերում պատասխանատվության անձեռնմխելիության իրավունք և կարող է ամբիոնն անկաշկանդ օգտագործել ոչ միայն պաշտոնատար անձանց, այլև ցանկացած այլ մասնավոր անձի վիրավորելու և զրպարտելու համար։ Դա, թերևս, չի նպաստի բանավեճի քաղաքակիրթ ավանդույթների ձևավորմանը։

Ինչ վերաբերում է դատական քննության ընթացքում արված արտահայտությունների իրավական գնահատականին, ապա դա կարող է բացառապես վերաբերել ամբաստանյալի զրպարտչական բնույթի արտահայտություններին, ինչը թելադրված է վերջինիս պաշտպանությունը լիարժեք երաշխավորելու անհրաժեշտությամբ։

«Դ» կետն ընդհանրապես խոցելի է. նախ, չափազանց տարողունակ է «հանրային խնդրի քննարկմանը մասնակցելու» արտահայտությունը: Բացի դրանից, տեղեկության ճշմարտությունը պարզելը ոչ մի առնչություն չունի վիրավորանքի հետ, քանզի վիրավորանքի տարր պարունակում է նաև ճշմարտացի տեղեկատվությունը: Հաջողված չէ նաև «մեղադրանքներ» բառը, քանզի դա բացառապես քրեադատավարական կոնկրետ նշանակություն ունեցող եզրույթ է: Հավելենք, որ «հավասարակշռված և բարեխիղճ» արտահայտությունը չափազանց ընդհանուր է, ուստի, առավել շահեկան կլիներ բացահայտել դրանց հստակ բովանդակությունը, մանավանդ որ դրանք նորույթ են իրավակիրառ ոլորտում:

4. 6-րդ մասում առաջարկում ենք հստակեցնել «հրապարակային ներողության» ընթացակարգը: Դա միգուցե դատարանն է որոշում՝ հաշվի առնելով վիրավորանք հասցնելու եղանակը: Թերևս, կարծում ենք, որ, հրապարակային ներողություն ասելով, պետք է հասկանալ դատաքննություն նախաձեռնելու դեպքում՝ հենց դատարանում ներողություն հայցելու մասին հայտարարությունը:

5. Առաջարկվում է 6-րդ, 7-րդ և 10-րդ մասերում հերքման վերաբերյալ դրույթները շարադրել «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթների հաշվառմամբ:

Հակառակ դեպքում հարկ է փոփոխություն կատարել նաև «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, ինչը, կարծում ենք, նպատակահարմար չէ:

Կարծում ենք, որ նպատակահարմար չէ նաև սահմանել փոխհատուցման չափի որևէ սահմանափակում: Մասնավորապես, այն կիրառելի չէ գործարար համբավի պաշտպանության դեպքում:

6. 8-րդ մասն առավելապես վերաբերում է քաղաքացիական դատավարության օրենսդրությանը, մասնավորապես, այն արդեն իսկ սպառիչ կարգավորված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով:

7. 9-րդ մասը հարկ է ներառել համապատասխանաբար 6-րդ և 7-րդ մասերում կամ շարադրել դրանցից անմիջապես հետո։ Ընդ որում, չափերի սահմանման հարցում հարկ է ապահովել միասնական մոտեցում։ Մինչդեռ, մի դեպքում որպես չափ սահմանված է մինչև որոշակի գումար, մեկ այլ դեպքում՝ կայուն գումար։

8. 10-րդ և 11-րդ մասերի միջև առկա է հակասություն։ Մասնավորապես, «դ» կետով արդեն իսկ հղում է արված 11-րդ հոդվածին։ Ուստի, հիմնավորված չէ «եթե սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված միջոցները բավարար չեն» արտահայտությունը։ Եթե դա վերաբերում է որոշ միջոցների, ապա հարկ է հստակեցնել։

Ընդհանրապես, նախագծով սահմանված են փոխհատուցման 3 տարբեր չափեր, որոնց հիմքերը նույնական են։

9. Առաջարկում ենք 12-րդ մասը հստակեցնել։ «Նախկինում» արտահայտությունը խիստ անորոշ է. դա միանշանակ կարող է վերաբերել նաև ընդամենը մեկ օր առաջ հրապարակված, տարածված նյութում առկա զրպարտող փաստացի տվյալին։ Հավելենք նաև, որ լրատվության ներկա ծավալների և բնույթի պայմաններում անձը կարող է և ի վիճակի չլինել իրազեկ լինելու իր մասին հրապարակված զրպարտությանը։ Ավելին, զրպարտությունը հերքելու պահանջը ոչ թե պարտականություն, այլ իրավունք է։ Անհաջող է նաև «կրկնել է» արտահայտությունը, դրա տակ կարող է և հասկացվել առանց որևէ հղում կատարելու պարզապես զրպարտանքը կրկնելը։ Բացի դրանից, հերքման հայցի առկայության դեպքում ևս հիմնավորված չէ հրապարակումներով հանդես գալը թույլատրելի համարելը։ Ընդհանրապես, այս դրույթը լուրջ վերանայման կարիք ունի։

10. Առաջարկում ենք 14-րդ մասը ներառել 11-րդ մասում։

11. Միանգամայն հիմնավորված է իրավաբանական անձի գործարար համբավի պաշտպանության ինստիտուտը պահպանելը, սակայն 2-րդ հոդվածով կատարվող լրացման 16-րդ մասում առաջարկվում է հղում կատարել ոչ թե այդ հոդվածի, այլ

օրենսգրքի և այլ օրենքների վրա, քանի որ վնասի հատուցման ինստիտուտի որոշ այլ նորմեր կիրառելի են նաև այդ դեպքում (օրինակ, 60-րդ գլխի նորմերը)։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նախագծերի փաթեթը քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Պ-774-25.11.2009-ՊԻ-010/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 19-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19. Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը

Քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի (անձանց) կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից եւ զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով»:»

Հոդված 2. Օրենսգրքի 60-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1.-րդ պարագրաֆով.

«§2.1. Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները:

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

1. Քաղաքացին, որի կարծիքով իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակայնորեն տարածած անձի դեմ:
2. Սույն օրենսգրքի իմաստով վիրավորանք է համարվում խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով կատարված հրապարակային արտահայտությունը (կարծիքը կամ գնահատող դատողությունը), որի նպատակը կամ մտադրությունը անձին արատավորելն է:

   Սույն հոդվածի իմաստով արտահայտությունը չի համարվում անձին արատավորելու մտադրությամբ տարածված, եթե այն տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային կամ իրավաչափ մասնավոր շահով:

3. Սույն օրենսգրքի իմաստով զրպարտություն է համարվում անձի վերաբերյալ այնպիսի ոչ ճշմարիտ փաստացի տվյալների հրապարակային տարածումը, որոնք արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը:
4. Սույն հոդվածում նախատեսված գործերով անհրաժեշտ փաստացի տվյալների (հանգամանքների) ապացուցման բեռը, կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ, մինչդեռ հայցվորն է տիրապետում այդ փաստացի տվյալներին (հանգամանքներին):
5. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված փաստացի տվյալները չեն մեկնաբանվում որպես զրպարտություն, եթե դրանք տեղ են գտել՝

ա) օրենսդիր մարմնում լսումների և նիստերի ընթացքում արված ելույթում:

բ) օրենսդիր մարմնի մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովում, (հանձնախմբում) լսումների ընթացքում արված հայտարարությունում, եթե այն առնչվում է այդ մարմնում քննվող խնդրին,

գ) դատական քննության մասնակցի կողմից դատական քննության ընթացքում արված հայտարարությունում, որը վերաբերել է քննվող գործի հանգամանքներին,

դ) գիտական կամ հանրային խնդրի քննարկմանը մասնակցելու նպատակով արված հայտարարությունում, երբ ապացուցվի, որ դրանք տարածած անձը ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ պարզելու դրանց ճշմարտությունը և(կամ) հիմնավորելու դրանց մեջ առկա մեղադրանքները, ինչպես նաև հավասարակշռված և բարեխիղճ է ներկայացրել այդ տվյալները:

6. Վիրավորանքի դեպքում քաղաքացին իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած անձից դատական կարգով պահանջել՝

ա) հրապարակային ներողություն.

բ) հերքում, եթե դա հնարավոր է՝ հաշվի առնելով վիարվորանքում տեղ գտած արտահայտության (արտահայտությունների) էությունը.

գ) միանվագ փոխհատուցման վճարում նվազագույն աշխատավարձի մինչև 250-ապատիկի չափով: Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները :

7. Զրպարտության դեպքում քաղաքացին իրավունք ունի իրեն զրպարտած անձից դատական կարգով պահանջել՝

ա) զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների հրապարակային հերքում

բ) միանվագ փոխհատուցման վճարում նվազագույն աշխատավարձի մինչև 500-ապատիկի չափով: Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները:

8. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված միջոցներով բավարարում ստանալու հետ միասին քաղաքացին իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջել վիարվորանքի կամ զրպարտության հետևանքով իրեն պատճառված վնասները, այդ թվում՝ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգման համար իր կողմից կատարված ծախսերը, որոնց չափը սահմանում է դատարանը:

9. Եթե վիարավորանքը կամ զրպարտությունը դրանք տարածած անձի դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա այդ անձը որպես բարոյական վնասի հատուցում պետէ վճարի միանվագ գումար համապատասխանաբար զրպարտության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի, իսկ վիրավորանքի դեպքում՝ մինչև 500-ապատիկի չափով: Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները:

10. Եթե վիրավորանքը կամ զրպարտությունը տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ, եթե նման տեղեկությունը տարածվել է հեռուստատեսությամբ և(կամ) ռադիոյով ուղիղ հեռարձակմամբ, ապա վնաս կրած *անձն իրավունք ունի զանգվածային լրատվական գործողություն իրականացնողից* պահանջել՝

ա/ հրապարակել պատասխան,

բ/ ուղղել փաստերի մասին սխալ հայտարարությունը,

գ/ հրապարակել դատարանի վճիռը, որը հավաստում է փաստերի մասին սխալ լինելը,

դ/ վճարել փոխհատուցում սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով:

11. Եթե սուն հոդվածի 10-րդ մասով սահմանված միջոցները բավարար չեն խախտած իրավունքները վերականգնելու համար, ապա դատարանը կարող է զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել վճարել համապատասխանաբար զրպարտության դեպքում նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի իսկ վիարվորանքի դեպքում մինչև 1000-ապատիկի չափով միանված գումար:

Գումարի չափը սահմանելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները.

ա) զանգվածային լրատվության միջոցի կողմից պատասխան կամ ուղղում հրապարակելու մասին առաջարկ լինելը,

բ) վիճարկվող հրապարակման հավասարակշռված ձևով ներկայացված լինելը,

գ) հրապարակման վերաբերելիությունը էական հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրներին և դրա նպատակաուղղվածությունը հանրային շահին ծառայելուն:

12. Անձը կարող է ազատվել սույն հոդվածով սահմանված պատասխանատվությունից, եթե նա կրկնել է այնպիսի զրպարտող փաստացի տվյալ, որը նախկինում հրապարակայնորեն տարածվել է և չի հերքվել զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետում:
13. Անձը չի կարող ազատվել սույն հոդվածով սահմանված պատասխանատվությունից, եթե նա կրկնել է նախկինում մեկ այլ անձի կողմից արտահայտված վիրավորանքը՝ անկախ դրա տարածման միջոցներից և ժամկետից:
14. Դատարանը սույն հոդվածով սահմանված վնասի հատուցման չափը սահմանելիս պետք է հաշվի առնի պատասխանողի գույքային դրությունը:
15. Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան վիրավորանքի կամ զրպարտության տարածման մասին անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:
16. Անձի գործարար համբավի պաշտպանության մասին սույն հոդվածի կանոնները համապատասխանաբար կիրառվում են իրավաբանական անձի գործարար համբավի պաշտպանության նկատմամբ:

Հոդված 3. Օրենսգրքի 22-րդ հոդվածի «19 հոդվածով» բառերը փոխարինել «1087.1-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ դրույթներ

Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հարապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: